ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 7-Լ

«30» 01 2023 թ.Ք. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազ Գարեգին Ժորայի Մանուկյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու և ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Գուրգեն Գագիկի Մադոյանին Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի պաշտոնին փոխադրելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2023 թվականի հունվարի 25-ի համապատասխանաբար՝ N 31-Ա և N 32-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է կատարել Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Գ.Մանուկյանի կողմից՝ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Գ.Մադոյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Մանասյան Անահիտ - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,

Հանձնախմբի անդամներ՝

Խաչատրյան Հայկ -	Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ,
Մարտիրոսյան Հայկ -	ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ,
Նազարեթյան Արմինե -	ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետ,
Ղահրամանյան Մարուշ -	ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար,
Գևորգյան Թամարա -	ՀՀ դատախազության առաջին բաժնի պետի պաշտոնակատար,
Մարիաննա Բալաբեկյան -	Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության տարածքային բաժնի պետի պարտականությունները կատարող:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն՝ներկայացնել մինչև 2023 թվականի փետրվարի 14-ը:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ